

124

11

7289

Членство в обществе  
1910

11  
722925

§ 2004



Համայնքային  
Մարմին

ՅՈՎԱՆՆԵՍ ԳԻՆՈՍԱՆԴԱՆԵԱՆ.

*Արթուր Արսև*

Սեպտ. 21<sup>5</sup> օրան

Գ Ր Զ Ի Մ Ա Ր Դ Ը ԽԻ  
3903

ԿԵԱՆՔԻ ԴՐԱՄԱՆ



Նրե՛ք գործողութեամբ եւ մեկ պահկերով.



Վ ա դ ա ր օ ա պ ա ռ  
Տպարան Մ. Արուոյ Ս. Էջմիածնի  
1910



*Handwritten text, mostly illegible due to bleed-through from the reverse side of the page.*

Իրաւունքները վերապահւած են.



11-728994

Ա.

### Երիտասարդութիւն.

Աղօտ լուսաւորութիւն. վիտուս են ծաղկազարդ հաւերժահարսները. շարժելով փորրիկ թելիկները. Մէկը շուրջում գգուում է Արամայիսին. Տիրում է խորհրդաւոր լուսութիւն.

**Արամայիս.** Աստուած իմ, այս սրտեղ եմ ես... Արդեօք դո՞ւ ես իմ մօտ, իմ նազելիս... Մի՞թէ դու չզայրացար իմ յանդուգն նամակիս, խղճալի քայլիս համար... Արդեօք այդ դո՞ւ ես, որ անձամբ եկել ես այս քաղցր վայրկեաններս բաժանելու միասինս Այդ դո՞ւ ես... Դն, որ անհաս էիր իմ հոգու և մտքի համար և դու այժմ ինձ այդքան մօտ... Մի՞թէ, մարդկային հնարագիտութիւնը արեց իր ամենազժւար նուաճումը՝ գաննելով այն միջոցը, որով ինձ պէս խեղճ արարածները հասել են այն անհուն բարձրութեան, որտեղ դու էիր կանգնած... Թէ կատարուել է ստեղծութեան ստեղծութիւն՝ դու գահավէժ ես եղել... Ինչ և է, քանի որ այս վայրկեանիս դու ինձ այդքան մօտ ես... Ես ամենաերջանիկ արարածն եմ... Բայց դու ինչո՞ւ չես խօսում, սրտեղ եմ ես... Այդ ինչ արարածներն են, որ վիտուս են մեր շուրջը՝ Աստուած իմ, մի՞թէ տեսիլ է այս բոլորը... Խօսիր, պարզիր ինձ այս բոլորը, պատճիր աչքիս վարագոյրը, որպէս զի այս հրաշքի իսկութիւնը տեսնեմ... (Դրսից լուսւմ է սարսեցնող և տեսող



քրքիչ. բոլորը անյայտանում են. մշալով ծածկում է դէմը):  
Ո՛ւր ես դու... Յնորք... Տեսիլք...

Դեւը (Մտնում է քրքշալով) Բոլորը իմն է, կեցցէ Դեւ...

Արամայիս. Ո՞վ ես դու, ինչ ես քրքջում իմ տան-  
ջանքների վերայ...

Դեւը. (Քրքշալով) Յնորք էր տեսածդ, ծաղրող  
ցնորք: Ա՛ւ, ահա բերել եմ նամակիդ պատասխանը. նա  
է գրել: Ա՛ւ, կարգա...

Արամայիս. Ուրեմն երազ, ցնորք էր բուրբը...

Դեւը. Կարգա, կարգա...

Արամայիս. Ձեռներս դողդողում են, սարսափում  
եմ նոր ցնորքից... Բաջութիւնս շատ պակաս է: Օ՛, այս  
փոքրիկ թղթի մէջ փակւած է իմ բաղդը, իմ ապագան:

Դեւը. (Քրքշալով) Հա, հա, հա. թոյնը թոյն է.  
դառը, մահաբեր... Ո՛ւշ է, չկայ ապագայ... Կարգա,  
կարգա:

Արամայիս. (Կարդում է) «Ստացայ Ձեր նամակը,  
որով դուք սէր էիք խնդրել ինձնից, սակայն յայտնում  
եմ, որ Ձեզ յարգում եմ, իսկ սիրել՝ երբէք»: (Պոնւաւում)  
Ինչպէս, երբէք... Ուրեմն կտրած է ինձ համար ամեն  
բան... Նա մերժում է, նա չի կարող սիրել ինձ, երբէք  
չի կարող սիրել... Օ՛, անիծեալ բաղդ, սոսկալի հարւած,  
միթէ մահ էր քո որոշումը ինձ համար: (Ուզում է ուշա-  
ժափել ընկնել, Դեւը բռնում է):

Դեւը. (Քրքշալով) Այդքան չնւա, վախկոտ նա-  
պաստակ, սպասիր, լսիր ինձ:

Արամայիս. (Սարսափած) Ո՞վ ես դու, այլանդակ  
հրէշ, որ քրքջում ես մահւան գոհի վերայ... Հեռու, դու  
այլանդակ ես, թո՛ղ ինձ, կոկորդո սեղմում է, ես չեմ  
կարող քո մօտ չնչել:

Դեւը. Մի սարսափիր իմ ահուկի պատկերից, այս  
սև կաշի տակ կայ մի սպիտակ սիրտ, և իմ քրքիջը  
բոլոր վշտացածներին հանդիստ է պարզեում: Մարդիկ  
չեն սիրում Սև Դեւին. սակայն Դեւ սիրում է մարդ-

կանց... Որքան որ սարսափես ինձնից, որքան ատես  
ինձ, ես դարձեալ կսիրեմ քեզ և այժմ ես քեզ կազա-  
տեմ այդ տանջող վշտից: Լսիր խորհրդիս...

Արամայիս. Լսել քեզ, լսել քո խորհուրդները, ան-  
կարելի է... Միթէ քեզ պէս ահուկի հրէշը կարող է  
այնպիսի խորհուրդ տալ, որից մարդու ականջները  
չխլանան... Օ՛, ես սոսկում եմ նոյն իսկ քո ներկայու-  
թիւնից... Թո՛ղ ինձ, հեռացիր ինձնից:

Դեւը. Յիմանր, միթէ ես աւելի սոսկալի եմ քան  
մարդիկ, որոնք սպիտակ կաշւով են ծածկւած: Նորից  
եմ կրկնում, լսիր ինձ և դու գոհ կլինես:

Արամայիս. Խնայիր ինձ, արդէն ես մեռնում եմ,  
եւ այլ ես հաղիւ կարողանամ քո մօտ կենդանի մնալ...  
Թո՛ղ ինձ, ես ուզում եմ փախչել, փախչել շատ հեռու...

Դեւը. Ո՛ւր ես ուզում փախչել, էլ լինչի ես փա-  
փազում... Միթէ դու չէիր, որ կարգացիր քո մահւան  
մեղեդին, այլ ես ինչո՞ւ ես սարսափում մահից... Ձէ որ  
քեզ մերժեց... Միթէ այդ չէր քո մահը, էլ ինչ սպա-  
սելիք ունես աշխարհից... Մոռացար նամակը: Կարգա,  
մէկ էլ կարգա «երբէք» բառը... և դու այլ ես չես սար-  
սափի ինձնից:

Արամայիս. Սոսկալի Դեւ, ինչո՞ւ ես ինձ յիշեցնում  
այդ բուրբը, ինչու ես ձեռքդ մեկնում սրտիս, որտեղ  
այժմ ոչինչ չկայ, որտեղ անսահման ամայութիւն է:

Դեւը. Չար չէ դիտաւորութիւնս. ես ցաւում եմ  
քո վերայ: Ես համոզւած եմ, որ դու դատարկ սրտով  
անկարող ես ապրել, ուստի ուզում եմ օգնել քեզ:  
Ամայութիւնը սոսկալի է. մարդիկ անզօր են ամայու-  
թեան մէջ ապրել: Լսիր ինձ, և ես կսովորեցնեմ քեզ  
թէ ինչ պէտք է անես: Փախչելը յիմարութիւն կլինի...

Արամայիս. Ուրեմն ինչ անեմ, ինչով լցնեմ սըր-  
տիս ամայութիւնը. և միթէ կարելի է լցնել սրտի  
ամայութիւնը... Ո՛չ, անկարելի է... Մարդկային սիրտը  
մի տարօրինակ կերտւածք է, եթէ դատարկւեց՝ այլևս

78183 ակ

911913 - 27



անկարելի է լցնել: Իսկ դատարկ սիրտը անտանելի տանջանք է. մարդը թշւառ է:

**Արամայիս.** Այն, ես թշւառ եմ, բաղդը ինձ մահացու հարւած տւեց: Հեռու ինձանից, ես այլ ես խորհուրդների կարիք չեմ զգում, որովհետեւ այլ ես ապրելու էլ չեմ: Կեանքը սոսկալի է, ես մահ եմ տենչում:

**Պեւ.** Եւ դու անկարող ես ապրել. ես գիտեմ այդ: Սակայն դու անփորձ ես. ես եկել եմ քեզ օգնելու: Հսիր ինձ, և դու անվրդով վերջ կգնես այդ թշւառ կեանքիդ:

**Արամայիս.** Եթէ այդ է քո նպատակը, եթէ դա է քեզ այստեղ ուղարկել, ասա, ես կլսեմ քո խորհուրդները:

**Պեւ.** Իմ խորհուրդը մէկ է, և ոչ էլ տարօրինակ. այդ արդէն շատերն են լսել և կատարել, ուստի դարձել է սովորական ասորեայ երևոյթ: Առ ահա քեզ թոյն, ահա զէնք, փորձիր որով կցանկաս. երկուսն էլ իմ սեփականութիւնն են:

**Արամայիս.** Շնորհակալ եմ քեզանից... Թէև դու Սև ես, այլանդակ ես, գարշելի ես, բայց ես այլ ես քեզնից չեմ խորշում և այսօրեայ քո օգնութեան համար յաւիտեան երախտագարտ կմնամ քեզ: Ահա գրեմ վերջին խօսքս և վերջացնեմ ամեն ինչս (զրոււմ է):

**Պեւ.** (Ընդհատելով) Սպասիր, այդ ինչ ես գրում, այդպէս չպէտք է գրես.

**Արամայիս.** Ապա ինչպէս:

**Պեւ.** Դու շարժիր մասներդ ես կթելադրեմ: Գրիր, «Ես այսօր մեռնում եմ, որովհետեւ, նա, որին սիրում պաշտում էի, այսօր ինձ թոյն տւեց»:

**Արամայիս.** Ո՛չ, ո՛չ, հրէշ, միթէ ցանկանում ես, որ ես նրա վշտանալու պատճառը դառնամ:

**Պեւ.** Յիմար, ահա այդ է այլանդակութիւնը և ոչ թէ իմ պատկերը: (Քրքշալով) Հա, հա, հա, միթէ նրա ուղարկած թղթի կտորում թոյն չէր պարփակւած, որը դու

ընդունեցիր առանց զգալու. և այսօր քեզ սպանողը այն թոյնն է և ոչ թէ Չար Դեի տւած թոյնը: Ինչու նա պէտք է քեզ մահ պատճառի առանց այլայլելու, իսկ դու սոսկաս, որ նրան վիշտ պէտք է պատճառես:

**Արամայիս.** Դե, այժմ այլևս ուղիղս չի դորձում: Լսում եմ քո բառերը, հասկանում եմ նրանց ճշմարտութիւնը, բայց չեմ հասկանում, առ, գրիր ինչ որ կցանկաս, գրիր ինչպէս պահանջում է զիւային բընութիւնը:

**Պեւ.** Ահա գրեցի: Դէ, շտապիր, որն ես ուզում:

**Արամայիս.** Ամայութիւնը մեռնում է լուսթեան մէջ: Ես սիրում եմ լուսթիւն: Տնւր թոյնը, թող ամայի սիրտս մեռնի լուս, առանց ազմկելու:

**Պեւ.** Ահա, առ, իսկոյն, առանց վախենալու: Շտապիր, այդ է քո միակ երջանիկ հանգստութիւնը:

**Արամայիս.** Սոսկալի Դե, հրէշային եմ քո հնարքները. ինձ թւում է թէ արդէն թոյնի ազդեցութիւնից մեռնում եմ:

**Պեւ.** Երջանկութեան, խաղաղութեան սկիզբը անզգայութիւնն է. խմիր, մի ուշացնիր:

**Արամայիս.** Թէև կոյր, խուարում խարխափելով և սարսափով լսում եմ քեզ և սոսկում քեզանից. սակայն անգոր եմ գիմադրել քո հրամանին, խմում եմ, բայց սարսափ է ափրում ինձ: (Ուզում է խմել, ճշալով ներս է ընկնում մի կին եւ արգելում է Արամայիսին խմելը):

**Անճաճօր կիճը.** Սպասիր...

**Պեւ.** (Կնոջ ղէմը կանգնելով) Շտապիր, չւտ, իսկոյն. մի հաւատայ աչքիդ ու ականջիդ:

**Անճ. կիճը.** Սպասիր, կնյր, թափիր ցած այդ զրուելի հեղուկը: (Խփում եւ թափում է թոյնը.)

**Արամայիս.** Արդեօք ում եմ տեսնում, ո՞վ ես դու:

**Անճ. կիճը.** Ես սփոփանք եմ, ես փրկիչ եմ, եկել եմ քեզ փրկելու, եկել եմ քեզ սփոփելու:

**Պեւ.** Մի լսիր նրան, խցիր ականջներդ, փակիր



աչքերդ, և իսկոյն վերջ տուր կեանքիդ: Մի շահայ նրա զեղեցկութեամբ, նրա աննման զեղեցկութեան տակ ծածկւած է ահռելի այլանդակութիւն:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Մնւտ է, քեզ խաբոււմ, քեզ չեզոււմ է ճշմարիտ ճանապարհից:

**Արամայիս.** Տանջանքս անսահման է, մաքերիս փոթորիկը անարկու: Չգիտեմ, որտեղ է հանգստութիւնը, ո՞վ է սփոփանքի և երջանկութեան աղբիւրը:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Լսիր ինձ և այդ բոլորը կգտնես:

**Արամայիս.** Աստ, ինչ ևս ցանկանում, ասա, ինչ անես:

**Պեւը.** Ատրճանակով վերջ տուր կեանքիդ, չնւտ:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Խոտտացիր ինձ, որ այլ ևս երբէք չես լսի այս հրէշին և չես յանձն առնի կատարել սորա պատւէրնեցը, և այն ժամանակ ևս քեզ կտամ այն, ինչ որ դու ևս ցանկանում, սփոփանք, խաղաղութիւն, խոտացիր միայն:

**Արամայիս.** Խոտտանում եմ... (Ատրճանակը ցած ձգելով): Հեռու ինձանից, չար սատանայ, հեռու, ևս այլ ևս քո կարիքը չեմ զգում, ևս դեռ պէտք է աղբում, ստանամ սփոփանք, խաղաղութիւն և երջանկութիւն:

**Պեւը.** (Չայրացած) Ինձ մերժում ես, ինձ նորում ես, և այդ քեզ արժան չի նստիլ: Դու տեսչում ես երջանկութեան, խաղաղութեան, սակայն ևս, որ այսուհետև քո ոխերիմ թշնամին կմնամ, շարունակ կդառնացնեմ և կթունաւորեմ քո կեանքը:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Մի վախիր, մեծ է իմ սփոփանքը, անբաւ իմ մխիթարութիւնը. Դեի դաւերը անդոր են այդ բոլորի դէմ...

**Պեւը.** Միթէ մոռացար «երբէք» բառը... Այդ բոլորից յետոյ միթէ կարող ես սփոփանք և խաղաղութիւն գտնել: Քո սիրտը դատարկ է, ամայութիւնը ահռելի: Երբէք... երբէք...

**Արամայիս.** Դարձեալ ինձ յիշեցրիր անցեալս, դար-

ձեալ յուզեցիր սրտիս ամայի անապատը... Օ՛ հրէշ, գարչելի հրէշ, սոսկալի ևս դու:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Մեծ է ամայութիւնը և աշխարհիս վերայ ամեն մեծութիւն չափ ու սահման ունի, մեծ է իմ սփոփանքը և նա չափ ու սահման չունի:

**Արամայիս.** Ա՛խ, ևս դժբաղդ եմ, բաղդի մատները թոյն է տւել ինձ: Օ՛, տանջանքս մեծ է, ինձ համար այլ ևս աշխարհում չկայ ոչ մի բան:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Ես գիտեմ ամեն բան, ինձ յայտնի է քո թշուա պատմութիւնը: Մարդիկ ծնւում են դատարկ սրտով, բայց ժամանակը լցնում է այդ դատարկութիւնը: Մարդկային կամքը, որ ծնւում է կուր համար, սկզբում շատ անդոր և թայլ է լինում, բայց հետզհետէ ժամանակը ամրացնում է նրանց: Լսիր ինձ, իմ ձայնը երաժշտութիւնից աւելի դուրեկան է...

**Արամայիս.** Խօսիր, կլսեմ, եթէ բնութիւնը ինձ լսելու ընդունակութիւն տւել է:

**Պեւը.** Կլսես, լաւ, ուրեմն ես քո յաւիտենական թշնամիդ կմնամ:

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Արի եղբր, մի վախենայ Դեի սպառնալիքից: Թող լինին թշնամիներ, որովհետև իսկական բարեկամները թշնամիների ներկայութեամբ են միայն ակընյայտին լինում: Ապրիր և կուրի թշնամիների դէմ. իսկ ինքնասպանութիւնը դեի գաւերիցն է: Չգուր այդ հրէշից, որովհետև բնութիւնը մարդ գոյացնելիս նրա ճակատին այդ մահը չգրուցմեց, այլ այդ դեի արարմունքն է... Ապրիր, շատ ապրիր:

**Արամայիս.** Բայց սիրտս, այս մեծ դատարկութիւնը... թշնամիներս...

**Ա.ԵՃ. ԿԻՅՐ.** Այն, սիրտդ դատարկ է, և մեծ է այդ վէրքդ. ունես թշնամիներ և ահռելի են թշնամիներդ... Սակայն յուսամիշտ, որ այդ բոլորի դէմ կըլուող պիտի լինի կամքը. ուժեղ, անյաղթ կամքը... Եւ դու կունենաս այդ:



Արամայիս. Խօսիր, խօսիր, կարծես թէ քեզ լսում եմ, կարծես ահանջիս մութը թոյլ-թոյլ խփում է սալին...

Աճձ. Կիճը. Ես քեզ կտամ պատերաճներ, որոնք դու միշտ կլինես: Այդ պատերաճները քեզ ուժ կտան, կամքդ կզօրացնեն, և դու կարող կլինես կուել քո թշնամիների դէմ: Այդ պատերաճները կլցնեն քո ամայի դատարկ սիրտը, և այնպէս կլցւի, որ նոյն իսկ կճնչի պատերը:

Արամայիս. Օ՛, որքան քաղցր է հնչում այդ երկնային երաժշտութիւնը... Խօսիր, խօսիր, արդէն բուժւում են իմ խուլ ահանջները:

Աճձ. Կիճը. Ահա իմ պատերաճները, լսիր, լսու լսիր:

1. Սէրը, քաղցրութեան գիմակով ծածկւած դառնութիւն է:

2. Սիրոյ աչքերը Դեռ կապում է, և երբ զգաստութիւնը բաց է անում, մարդ տեսնում այդ հրէջի այլանդակ պատկերը:

3. Սիրով տարելը արատ է մարդու համար, որովհետեւ նա դառնում է կամ թոյլ նապաստակ, կամ անուշի դազան:

4. Սէրը, մի մխացող խարոյկ է, որին մարդու երևակայութիւնը բորբոքում է և որից առաջանում է սոսկալի հրդեհներ:

5. Սէրը մի սլացող նծոյգ է, որ երբեմն ցատկում է ահազին անդունդների վրայով, իսկ յաճախ սայթաքում և յաւիտենական կորստի մատնւում մի ջնջին փոսում:

6. Անձնասպանութիւն գործելը, մանաւանդ սիրոյ համար, մարդկային հոգու այլանդակումն է, կամքի արատաւոր թուլութիւնը:

7. Միակ, յաւիտենական և գովեստի արժանի սէրն է «Սէր զէպի մարդկութիւնը»: Այդ սէրը ունեցողները

ապրում են այդ սիրով յաւիտեան՝ այսինքն մեռնելուց յետոյ ես:

Ահա իմ պատերաճները, որոնք առաջնորդող սկզբունք պէտք է լինին բոլոր երիտասարդների համար: Դէպի մարդկութեան սէրն է, որ լցնում անծայր անսահման սրտերի դատարկութիւնը: Լցրու սիրտդ այդ սիրով և դու տանջանքի, վշտի, ուրախութեան ժամին կուեննաս մշտական երջանկութիւն և խաղաղութիւն... (միջոց):

Արամայիս. Դու լսեցի ևս, դու չես խօսում, բայց ճ, իմ ահանջներում գեռ հնչում է մի երկնային մեղեդի... Հանդիստ, լուռ մնացէք, թողէք երկար դմայլւում այդ ներդաշնակութեամբ...

Աճձ. Կիճը. Չմոռանաս պատերաճներս...

Արամայիս. Ես քո պատէրները սսկէ տառերով կգրեմ և կկախեմ միշտ իմ աչքի առջև...

Դեւը. Ուրեմն դու որոշեցիր:

Արամայիս, Որոշւած է՝ և ս նրա հոյատակն և մ...

Դեւը, Լսու, ուրեմն իմացիր, մի անուշի Գե թըշնամի ունես, որը ամեն անգ քեզ խօջընդոտ պիտի հանդիսանայ, և դառնացնի, թունաւորի քո ամբողջ կեանքը: Իմացիր, որ բարկութիւնս չափ ու սահման չունի, և այդ բոլորի թոյնը քեզ պէտք է խմացնեմ: Օ՛ն ուրեմն, Չար Դե, գոռն, ոռնն քո չարութեամբ, որ աշխարհը և ինքդ սոսկաս: (Գնում է):

Աճձ. Կիճը, Արի եղիր, չվախենաս դեի յորջորջանքներից: Վերցրու գրիչը և գրիր ու կմոռանաս Դեին:

Արամայիս. Քանի քեզ մծա եմ, ոչ ոքից չեմ վախենայ: Ասան, ներշնչիր ինձ, լցրու իմ սիրտը այդ յաւիտենական սիրով: Ես ուզում եմ ապրել, յաւիտեան ապրել:

Աճձ. Կիճը: Գրիր, գրիր, ահա ասում եմ, քո փրկութեան պատմութիւնը:



Ես սիրում էի վայելքն աշխարհի  
Դեի դաւերով աչքերս կապած  
Ու ձգտում հասնել երջանիկ կեանքի  
Կրքերի ցանցում ընկած, խճճւած...

Ի՞նչ էր ապագաս. մի տխուր պատկեր,  
Մի անցողական, մի խղճուկ վայելք...  
Թողած մարդկութիւն, ձգած ծնողներ,  
Բռնած մի ուղի մի անմիտ վերելք:

Բայց երբ աչքերս բացւեցին յանկարծ,  
Եւ զգաստութիւն իշխեց իմ վերայ,  
Տեսայ հրէջներ, կորուստս անդարձ,  
Տեսայ մի խղճուկ, անմիտ ապագայ:

Եւ այդ օրւանից իմ դատարկ սիրտս  
Լցրեցի անհուն մարդկութեան սիրով...  
Չեզ, ո՞վ թշւառներ, ուխտեցի կեանքս,  
Դէպի Չեզ թոյս զրկարաց հողով...

Արամայիս. Որքան խաղաղ եմ այժմ... Ես արդէն  
մտացայ ամեն ինչ, տեսայ Չար Դեի ահուկի կերպա-  
բանքը և անդարձ կորուստս... Չեզ, ո՞վ թշւառներ, ուխ-  
տում եմ կեանքս, դէպի ձեզ թռչում զրկարաց հողով:  
Բայց, ասո՛ւ, իսկապէս յաւիտենական պիտի լինի իմ այս  
երջանկութիւնը:

Աճձ. կիճը. Այսուհետև ես միշտ քեզ հետ կլինեմ...

Արամայիս. Բայց ո՞վ ես դու, որ իջել ես քո  
աստուածային դահից և եկել ես թշւառ տառապեալին  
մխիթարելու:

Աճձ. կիճը. Ես անուն չունեմ, մարդիկ զանազան  
անուններով են կոչում... Ինձ ծնել է ժամանակը և  
մարդը վաղուց ինձ աստուածացրել է և պաշտել: Թող  
զարգանն միտքդ, թող ուժեղանն կամքդ, և դու փայլես

աշխարհաճաշակ հանճարով... Եւ այդ ժամանակ դու էլ  
կկոչես ինձ Մի աճուճով...

Մեծ է ժառանգութիւնը... վայ շոպոյղներին...

Վա ըստղոյր

Բ.

## Մտուցական կեանք.

Պեւը. Ուրեմն այդպէս... Արդէն շատ բան արեցի-  
տեսնեմ այժմ ինչպէս կլինի: Խղճուկ, քաղցած է մտում,  
և արիւն քրտինքով աշխատած կողէկները շուտում է  
աշխատութիւնները հրատարակելով: Եւ ինչպիսի յոյ-  
սերով, սակայն բոլորովին չի յիշում ինձ, որ ամեն տեղ  
հետևում եմ նրան և բոլորի վայրոյթն ու արհամարանքն  
եմ գրգռում իր դէմ: Նա ձգնում է, շարժարում է,  
տանջում է, որ կուր իմ դէմ, նա մտածում է իր գրք-  
ւածքներով տիրել մարդկութեան մտքին և սրտին...  
Յիմնը, անմիտ, ո՞ւմ դէմ է կուր սկսել, ո՞ւմ դէմ է  
յարձակում իր անզօր կրիայի կաղմւածքով... Յարձա-  
կում, որ միայն դեի ծիծաղն է շարժում...

(Մտնում է Մանիան, Արամայիսի կինը):

Մաճիս. Օ՛, դու այստեղ ես, չար սասանայ, ես  
վաղուց քեզ էի վնասում, ես կարօտ եմ քո օգնութեանը:

Պեւը. Հն՛, հն՛, հն՛, այդ լաւ է, պատմիր, ինչ է:

Մաճիս. Ես ամուսնացայ սրա հետ երևակայելով,  
որ կդանեմ անսահման երջանկութիւն, սակայն շուտով  
յուսախարակցի և այժմ ես բոլորից թշւառն եմ: Դու  
էիք, որ ինձ սովորեցրիր կեանք և վայելք, և այժմ ես  
ուղում եմ կեանք, վայելք... Իսկ այդ հրէջը՝ իմ ամու-



սինը, իր թուղթ ու դրիչը աւելի է սիրում, քան մի այլ բան աշխարհում:

**Դեւր.** Ամեն զաւ դեղ ու դարման ունի, և ես եմ բուրբի դեղ ու դարմանը:

**Փանիա.** Տուր ինձ, տուր, խնդրում եմ, մի դեղ տուր, որ իմ ցաւը բուժւի:

**Դեւր.** Խոտացիր, որ միշտ կհնազանդես իմ հրամաններին, և ես քեզ կօգնեմ:

**Փանիա.** Հրէշ, Դու ամենագէտ ես, ասա, հրամայիր և ես քո հլու ծառան կլինեմ, կկատարեմ ամեն ինչ, միայն թէ երջանիկ լինեմ:

**Դեւր.** Եթէ այդպէս է, ուրեմն լսիր: Դու պէտք է խնդրես, աղաչես, լաս, սպասնաս, դայրանաս... և այն և եթէ այս բոլորը չի օգնի, նոր այն ժամանակ ես քեզ կսովորեցնեմ ի ս կ ա կ ա ն եր ջ ա ն կ ու թ ե ա ն գ ա ղ ա ն ի ք ը ...

**Փանիա.** Այո, կանեմ, ամեն բան կանեմ, միայն թէ երջանիկ լինեմ:

**Դեւր.** Ահա նա գալիս է, սկսիր լալ, հառաչել և չմոռանաս, ամեն դէպքում շանթես... Նորից մի դաւ, նորից մի տանջանք, որով համոզւած եմ որ, կհասնեմ իմ նպատակին:

**Փանիա.** Կտւմ եմ քեզ, հնազանդ եմ քո հրամանին: (Սկսում է լալ, ճեճկոտալ այդ ժամանակ մտնում է Արամայիսը): Մահ, մահ միայն, ապրել անկարելի է:

**Արամայիս.** Այս ինչ եմ տեսնում, ինչո՞ւ ես լալիս:

**Փանիա.** Ես մահ եմ ուզում, միայն մեռնել...

**Արամայիս.** Հոգեակս, այդ ինչքը եմ լսում քեզանից, ինչո՞ւ ես այդպէս ինձ վշտացնում:

**Փանիա.** Լռիր, դու անդո՞ւթ ես, դու գազան ես...

**Արամայիս.** Ե՞ս... արդեօք ինչո՞վ եմ վշտացրել քեզ, ինչո՞ւ համար եմ արժանանում այդ անարգանքին:

**Փանիա.** Ինչո՞ւ ամուսնացար ինձ հետ, ասա, ինչո՞ւ ինձ կապեցիր զժբաղդութեան հանդոցոյով: Ես կին եմ,

ևս ապրել եմ ուղում, ես վայելք և երջանկութիւն եմ տեսնում: Գնա, աշխատիր, սողա, գողացիր, գործադրիր ամեն միջոց, միայն թէ հարստացիր, որ մենք երջանիկ ապրենք:

**Արամայիս.** Լռիր, լսիր, այդ բոլորը դեի դաւերն են, որին դու խաբւել և հաւատացել ես: Մթթէ հարբատութեան մէջն է երջանկութիւնը. սչ, սչ, սիրելիս, մենք երջանիկ կլինենք եթէ իրար սիրենք, տանջւենք իրար ցաւերով և ուրախանանք՝ ուրախութեամբ:

**Փանիա.** Իսկ դու ինձ երբէք չես սիրում, դու սիրա չունես, քար է կրծքիդ տակը:

**Արամայիս.** Օ՛, սչ, ես քեզ սիրում եմ, և այդ սէրը մեծ է, անսպառ: Բայց կայ նաև մի ուրիշ, նոյնչափ և աւելի մեծ սէրը, որը չափ ու սահման չունի:

**Փանիա.** Եթէ դու ուրիշ սէր ունէիր, էլ ինչո՞ւ ինձ խաբեցիր և զժբաղդացրիր:

**Արամայիս.** Մէկը միւսին չի խանգարում և առանց մէկին միւսը կորցնում է իւր հմայքը:

**Փանիա.** Չի խանգարում... Հապա ինչո՞ւ ես թըշւառ եմ. ոչ ուտելու հաց ունենք, ոչ հագնելու շոր, խակ զբօսանքի, զւարճութեան, քէֆի մասին մտածելն իսկ ծիծաղելի է:

**Արամայիս.** Ուրեմն դու մոռանում ես մեր ամենանամեծ զւարճութիւնը՝ իմ ամբողջ անցրած կեանքիս արդիւնքը, այս ձեռագրերը: Կարգն, կարգն, և ամեն ինչ կգանես այնտեղ:

**Դեւր.** (Կնոջը հրելով) Պատուիր և ցրւիր:

**Փանիա.** (Զայրացած մի տետրակ պատռում եւ ցըրւում է սենեակում). Այլանդակ խելագար, միթէ սա մեզ հաց ու վայելք կտոյ: Երեքը ապագրեցիր ծաղրի ու հալածանքի արժանացար ու դեռ չես թողել այդ ցնորամտութիւնդ:

**Արամայիս.** Այս ինչ արիր, դու ստիպում ես ինձ, զ այրանալ, բայց իմացիր, որ այդ քեզ արժան չի նստիլ



**Մանիա.** Ե՛ս պէտք է գայրանամ, ես, որի՛ն այսպէս տանջում ես, հրէջ. ապա մի անգամ էլ համարձակէր դրիչ վերցնել, տես թէ ինչ աստիճան կլինի գայրոյթս.

**Աճծ. Կիճը.** Լսիր ինձ, մի յուզւիր դրա արարմունքների համար, այդ դա չէ անում. այլ այս հրէջը. տեսնում ես, Դեր հրճում է:

**Մանիա.** Մեծ դեր, մեծ հրէջը, դո՛ւ ես: Հեռացիր մեզանից, բաւական է որքան թշուառութիւն և հալածանք կրեցիրք քո պատճառով, կորիր այստեղից:

**Աճծ. Կիճը.** Թշուառ արարած, ես միայն հեղինակարող եմ քեզ: Ես ցաւում եմ, որ դու գործիք ես գառել Դեի ձեռքին և տանջում ես սորան և այլատերում իսկական երջանկութիւնը...

**Արամայիս.** Այլանդակ հրէջ, գարձնալ քո պատկերն եմ տեսնում...

**Պեւը.** Դեռ շատ ու շատ կտանես ինձ, քանի որ հետևում ես դրան: Դեռ շատ ու շատ կտանջես իմ սարքած դաւերից, որովհետև մերժեցիր ինձ և քո թըշուառ էութեամբ կռիւ ես յայտարարել իմ դէմ: Մինչև այսօր քո ամեն մի քայլդ, քո ամեն մի ձեռնարկութիւնդ հեղնութեամբ և վշտով եմ պսակել ես. «Որպէսզի աւելի զգաս իմ հարւածների ցաւը»: Ես այսօր քո կնոջն եմ գործիք գարձրել, իսկ վաղը սոսկալին պիտի տեսնես: Նորից եմ կրկնում իմ վաղուցւայ ասածս, «չսիր ինձ, ընդունիր իմ իշխանութիւնը և ես քեզ կտամ, փող, հարստութիւն, կեանք, վճիկը, երջանկութիւն»:

**Մանիա.** Լսում ես, լսում ես ինչքեր է խոստանում, ուրեմն շտապիր, ընդունիր նրա իշխանութիւնը, որ մենք երջանիկ ապրենք.

**Աճծ. Կիճը.** Չխաբւես դրա խօսքերից, սուտ է բոլորը, որովհետև հարստութեան, վայելքի մէջ չէ երջանկութիւնը: Դու արդէն գտել ես իսկական երջանկութեան աղբիւրը, խմիր և յագեցիր նրանով:

**Մանիա.** Անիծւիս դու, գարչելի վհուկ, որ յիմարացրել ես մեզ: Կորիր, հեռացիր մեզանից և ուրիշներին մատուցիր քո հրէջային ծառայութիւնը:

**Արամայիս.** Լսիր, անմտ, յանցանքդ մեծ է, որովհետև հայտնում ես մի սուրբ, մի մաքուր էակի: Օ՛, գարչելի Դե, ո՛ր եմ տանում քո չարութիւնները, որտեղ է հասնում նրանց թոյնը: Հեռացիր այստեղից. թող, գոնէ, մեր բնատանկան կեանքը խաղաղ մնայ:

**Պեւը.** Երբէք...

**Արամայիս.** Ուրեմն այդ է քո պատասխանը... Բայց իմացիր, քանի որ մասներս չարժեւում եմ, քանի որ սիրտս բարակում է և ինձ հովանաւորում է Սա, Դու երբէք չես հասնի քո նպատակին: Ծարունակիր, յուզիր բնատանկան ծովը ահակի փոթորիով. բայց իմացիր, որ լողացող նաւակը շատ ամուր է, նա միշտ կարող կլինի դիմադրել յուզած ալիքներին, իսկ նաւավարի կամքը՝ երկաթից էլ ամուր է:

**Պեւը.** Ծուռով նաւդ կխորտակեմ, և դու կզիմես իմ օգնութեան:

**Արամայիս.** Յուսով եմ երբէք:

**Պեւը.** Սոսկալի կլինի:

**Արամայիս.** Սպասում եմ սառնարիւն:

**Մանիա.** Դու սառնարիւն ես, դու անտարբեր ես, դու հրէջից սոսկալի ես: Ծուռով կորիր այստեղից. դնա, որտեղից որ կուզես, գնիր ինձ համար թանկագին շորեր, գեղեցիկ զարդեր, որովհետև ես մի բոսկէ անգամ այլևս չեմ կարող ապրել սառնց այդ: Գնա, չնւտ, շտապիր, եթէ ոչ, ես կհեռանամ քեզանից, և դու աւելի ծաղր ու ծանակի կենթարկես: Դուրս կորիր շուտով, քանի որ այս աթոռները գլխիդ չեմ ջարդել:

**Պեւը.** (Քրքջալով) Լաւ է, շատ լաւ է, կեցցես, աւելի քաջ եղիր:

**Արամայիս.** Միթէ այս է իմ անհուն սիրոյ պատասխանը:

1703-87  
11-2289/1





ԱճՑ. ԿԻՆՔ. Դու մահւան չափ դունատ ես, փոթորկւած ուկկիանից աւելի յուզւած: Գնանք դուրս, դետի ափին զբռնիր և հանգստացիր: (Գնում են):

Աւամայիս (Գնալով). Սոսկալի հրէչ, այս էլ ապարդիւն կանցնի:

Մանիա. Կորիւր և առանց նրանց շերտնս աչքիս:

Դեւը. (Մռայլւած եւ մտադրաղ). Հն, ուրեմն այդպէս...

Մանիա. Ինչո՞ւ մռայլեցիր, ինչ ես մտածում:

Դեւը. Ահնելի է նրա կամքի ուժը, դաւերս ի դերե են ելնում... Իմացիր, քեզ մնում է միայն «վերջին փորձը»:

Մանիա. Ասն, հրամայիր, ես պատրաստ եմ քեզ լսելու և հրամաններդ կատարելու, միայն թէ մի ուղի գտնեմ դէպի երջանկութիւն:

Դեւը. Արձակում եմ վերջին հրամանս, որով դու անպատճառ երջանիկ կլինես. դաւաճանիք այդ յիմարին:

Մանիա. Հրէչ, դաւաճանել, Օ՛, ես սոսկում եմ...

Դեւը. Եւ ինչո՞ւ պիտի սոսկաս, մի՞թէ նրա վարմունքը դաւաճանութիւնից սոսկալի չէ: Լսել ես՝ «ակն ընդ ական»... Ուրեմն և դու իրաւունք ունես աչքի փոխարէն աչքը հանելու:

Մանիա. Այն, ճիշտ ես ասում, ես իրաւունք ունեմ:

Դեւը. Դու դեռ բոլորովին թարմ ես, և քեզ շուտ կյաջողութի: Ուրեմն պատրաստիր. անս զալիս է այստեղ մի երիտասարդ...

Մանիա. (Հայելում նայելով) Այն, իսկապէս գրաւիչ եմ. միայն մաղերս են անկանոն, ահա ուղղեցի:

Դեւը. (Քրքջալով) Ա՛յ յաջողութիւն, մի հարւածով երկու որս (Ներս է մտնում մի երիտասարդ):

Երիտասարդը. Յարգանքս Ձեզ, տիկինս Ներողութիւն, պարոնը տանը չէ:

Մանիա. Ո՛չ, համեցէք խնդրեմ, նստէք:

Երիտասարդը. Շնորհակալութիւն տիկին. ես միայն պարոնին էի հարցնում: Ես ցանկանում եմ նրա գրւածքները ունենալ: Թէև բոլորը նրան ծաղրում, հալածում են, սակայն ես, ճ, պաշտում եմ: Ա՛խ, սրբան կուզէի նրա հետ խօսել, երկար, շատ երկար: Ես համոզւած եմ, որ նա մեծ մարդ է:

Մանիա. Նստեցէք խնդրեմ, ինքը շուտով կգայ, իսկ գրւածքները ես կարող եմ տալ:

Երիտ. Խնդրեմ տիկին, տէք իսկոյն բոլորը:

Մանիա. Բայց ինչո՞ւ էք շտապում, նստէք, մի փոքր կխօսենք, մինչև ինքն էլ կգայ:

Երիտ. Տիկին, մեծ երջանկութիւն է այս տանը լինել: Ինձ թւում է, թէ ես այժմ երկրի վրայ չեմ, այլ բարձր, շատ բարձր... Եւ ես սոսկում եմ այդ բարձրութիւնից, որովհետև իմ թշուա էութեան համար անտուր բան է:

Մանիա. Օ՛, սրբան շնորհակալ եմ... Բայց քանի՞ տարեկան էք:

Երիտ. Ե՞ս, քսանհինգ:

Մանիա. Ես էլ շատ մեծ չեմ, նոր եմ քսան վեցը մտել: (Շոյելով գլուխը). Բայց ինչ գեղեցիկ մաղեր ունէք, ինչ լայն ճակատ, ինչ վառվառն աչեր, սրբան նազելի այտեր, ինչ սիրուն քիթ, նորածիլ պիտեր, ինչ գրաւիչ վիզ... Իսկ կո՞ւրծքդ, իրանդ ստիպում են բոլորին խելագարի պէս քեզ գրկել, կրծքերին սեղմել... (Գրկում եւ սկսում է համարել):

Երիտ. (Շփոթւած). Տիկին, տիկին, այս ինչ էք անում... Թողէք, ի սէր Աստուծոյ...

Մանիա. Մի անգամ միայն... Մի վայրկեան գրկէք, սեղմէք կրծքներից ինձ, մի համբույր... այնուհետև դժուր գիտէք:

Դեւը. (Քրքջալով) Հրաշալի է... Այժմ գնամ և ներս բերեմ, որ իր աչքով տեսնի այս հրաշքը: (Գնում է):

Երիտ. Ա՛խ, տիկին, թողէք ինձ. արիւնս սկսում է ետալ, ես գողում եմ... Թողէք, եթէ ոչ, լիտոյ ուշ կլինի:



**Մանիա.** Միայն մի համբոյր այտիս, սեղմիր հա-  
րուստ կուրծքս կրծքիդ, այնուհետև դու անկարող կլինես  
առանց ինձ ապրել:

**Երիտ.** Ես յազմեալ եմ, ևս այժմ քո գերին եմ:  
(Սկսում է համբուրել, այդ միջոցին Գեւը ներս է բերում  
Արամայիսին):

**Գեւը.** (Քրքջալով) Հն, հն հն... տես, և սոսկան:

**Արամայիս.** (Յուզուժից իրեն կորցրած) Այս Ի՞նչ  
եմ տեսնում. դաւաճանութիւն: (Երկուսն էլ ճշում են եւ  
գուրս փախչում): Մահ, մահ միայն այժմ...:

**Գեւը.** Ապասիր, այժմ համուզեալ եմ, որ նաւադ  
փշրակց և կարօտ ես իմ օգնութեան:

**Արամայիս.** Սոսկալի հրէշ, դու ինձ յազմեցիր...

**Գեւը.** Յիմանր, վաղուց էիր յազմել, վաղուց էիր  
ընկել, սակայն հոգեարքի պէս ցնցուում էիր:

**Արամայիս.** Դու հրէշ ես, դու սոսկալի ես... Ինչո՞ւ  
ինձ կանչեցիր այն վայրկեանին, երբ կարդում էին իմ  
մահեան դատաւճիւրը: Թո՞ղ անէին աւելի սոսկալին, թո՞ղ  
այդ կատարէր շարունակ, միայն թէ ևս չտեսնէի, ևս  
չզգայի...

**Գեւը.** Այժմ դու կտեսնես իմ սրտի մեծու-  
թիւնը: Ես չթողեցի, որ Որդը ծածուկ ուտէր, մաշէր  
քեզ: Որովհետև ևս դեռ ցաւում եմ քո վերայ. անզօր  
թշնամի:

**Արամայիս.** Այլևս ոչինչ չեմ զգում. ևս կոյր եմ  
և ոչինչ չեմ տեսնում... Միթէ, այդ չափ սոսկալի ևս դու:

**Գեւը.** (Քրքջալով) Ապա ինչ էիր մտածում... Ին-  
չո՞ւ իմ ատկութիւնը և զայրոյթը զրգակցիր: Ի՞նչ էիր  
տեսնում: Դու իմ ջնջին կատակներից այնքան խղճալի  
զրութեան մէջ ընկար, որ ևս էլ խղճում եմ:

**Արամայիս:** Այլևս ինձ ոչինչ չմտաց կայժմ փշր-  
ւած, և աւու քայքայւած, ալիքներն ուժեղ. իսկ ես ան-  
զօր եմ զիմադրել նրանց... Օ՛, վիշտս, տառապանքս  
հսկայական է:

**Գեւը.** Բողոր վշտերի, բողոր վէրքերի բուժողը ես  
եմ. և ևի՞թէ չես խորշում ինձնից, ևս քեզ կօգնեմ:

**Արամայիս.** Ես չզիտեմ, ևս չեմ զգում... Արա՛,  
ինչ որ ցանկանում ես:

**Գեւը.** Ա՛ն, ահա քեզ գինի, օղի, ծխախոտ, խմիր  
ծխիր, որպէս զի բոլորովին պատրաստ լինես մեծ ան-  
դամահատութեան համար:

**Արամայիս.** Տո՛ւր, ա՛նր խմեմ, թող թնջնը թըմ-  
քեցնի հոգումս դազանացած Որդին: Ի՞նչ հրաշալի է,  
միթէ այսքան զօրաւոր է խմիչքը, և ես, ապուշս, մինչև  
այսօր չեմ հասկացել այդ: Տո՛ւր, շատ տուր, ևս ուզում  
եմ շատ խմել և յաւիտեան արբել:

**Գեւը.** Խմիր, ահա, որքան կցանկաս, ահա տու,  
ծխիր... Հն, հն, հն, էլ այսուհետև մեծազօրգ ձայնով  
չես գոռայ իմ և այս հրաշալիքների դէմ... Ժամանակը՝  
կեանքի փոթորիկը կտփայլի քեզ հրաժեշտ տալ ամեն  
մի համոզմունքի:

**Արամայիս.** Ուրեմն ևս պէտք է մեռնեմ, առանց  
հասնելու իմ խաբուսիկ նպատակներին: Դե՛, գոնէ ասն,  
ինչ է իմ վերջին հրատարակած աշխատութեան ճա-  
կատագիրը:

**Գեւը.** Անմիտ ինչ ևս սպասում... Սոսկալի ծաղր,  
անասման դայրոյթ, ատկութիւն, դու կեանքիդ դէմ...  
Այժմ անխնայ այրում են, որտեղ որ գտնում են և շու-  
տով հետքը անգամ կկորչի, աւելի սոսկալի, քան նախ-  
նիններին:

**Արամայիս.** Դե՛, դու ինձ բոլորովին յազմեցիր...  
**Անճաւօր կիւր.** (Ներս մտնելով) Դեռ ո՞չ, դեռ ինձ  
չի յազմել... Ես կենդանի եմ:

**Արամայիս.** Ամեն վիշտ կտանէի, ամեն տան-  
ջանքի կրիմադրէի, սակայն սորան՝ երբէք:

**Անճ.** Կիւր. Կիր ինձ մէկ անգամ էլ և դու դար-  
ձեալ երջանիկ կլինես: Մոռանում ես, որ այդ Դե՛ի դա-  
ւազրութիւնն է: Յիշում ևս առաջ մի անգամ էլ, երբ



նրա դաւերից ցնորւած ուղում էիր կեանքիդ վերջ տալ-  
Միթէ այդքան շուտ մոռացար իմ պատերաճանները:  
Ծանր է հարւածը, սակայն դու հզօր ես և կարող ես  
զիմազրել:

**Արամայիս.** Տանջանքս անչափ է, վշտերս անսահ-  
ման, իսկ միսիթարութիւնը չնչին... Թող, հեռացիր ինձ-  
նից, ես այլ ես քո կարիքը չեմ գգում: Այժմ հարցը  
փոխեց, զգացմունք ու սէր չէ խօսողը, սոսկալի է այս  
հռետորը: Ո՛ւմ գործն էլ որ լինի սա, Վեի, թէ Դեիին  
սոսկում պատճառող էակի, սակայն ես տեսայ... Օ՛,  
երանի թէ վաղուց կուրացած լինէի... Թող ինձ, թող  
վերջ տամ սոսկալի կեանքիս. ես ապրել անկարող եմ:

**Ա.ՅԺ. ԿԻՅՐ.** Դու արդէն կոյր ես, Դեը կուրացրել  
է քեզ, և այժմ քո վեհ բարձրութիւնից ուղում ես ցած  
ընկնել: Խղճան, խղճան քեզ, խղճան բոլորին:

**Արամայիս.** Այլ ես ո՛ւմ խղճամ, էլ ինչ բարձրու-  
թիւն... Դու չես կարգում, դու չես տեսնում... Անան,  
լաիր, այն մարդկութիւնը, որին սիրեցի, որի համար  
միայն ապրեցայ ու ամբողջ ուժերս շաղկեցի, և որի  
պատճառով անուելի Դեի անուելի դայրոյթը գրգռեցի,  
այժմ պատրաստ է ինձ խաչին մեխելու: Միթէ, այդ  
է իմ երախտիքի հատուցումը: Մարդկային ապերախ-  
տութիւնը ծայր ու սահման չունի, ուրեմն և յիմարու-  
թիւն, կուրութիւն կլինի խղճի ձայն փնտաւը... Բարձ-  
րութիւն... Այ, այսօրւայ հրէշային սճիրը... Անան պատուի  
անսահման բարձրութիւնը, որը կեղտի անդնդի խոր-  
քումն է: Այլեւ ինչ պարտք ունեմ անելու: (Վեը  
բրբջում է):

**Ա.ՅԺ. ԿԻՅՐ.** Լաւ է, բոլորը լաւ է, սակայն լսում  
ես, Դեը քրքջում է, անսահման է նրա ուրախութիւնը:  
Լաիր, մտածիր, հասկացիր, դարանը փորւած է, և դու  
ծայրին ես կանգնել, մի փոքր էլ գիտակցութեան բա-  
ցակայութիւն... և Դեի հրճւանքը անսահման կլինի: Մարդ-  
կութիւնը ապերախա է, ոչինչ չունեմ, նրա տըղի-

տութեան ցանցի մէջ ընկնելը ապերախտութեամբ է  
երեան դալիս, և այդ բոլորը Դեի դարձններն են. բայց  
գու, երբէք չպէտք է յուսահատուես. այդ կլինի քո  
ամենամեծ, ամենագաժան արատը:

**Արամայիս.** Բայց մինչև երբ, մինչև ո՛ւր, լսում  
ես, նրանք նոյն իսկ իմ կեանքի գէժ դաւեր են լարում:

**Ա.ՅԺ. ԿԻՅՐ.** Եւ դու հէնց դրանով անհաս բարձ-  
րութեան կհասնես: Յիշիր անցեալները, յիշիր Գողգո-  
թան: Միթէ Գողգոթան քեզ սարսափեցնում է. չես  
նախանձում Գողգոթային: Դու մի սարսափիր վեհ ճա-  
նապարհումդ եղած անուելի անդունդից. այդ Դեն է  
փորել: Դու պարտաւոր ես առանց յուսահատելու,  
վստահ առաջ գնալ և նոյնչափ վստահ ընկնել անդունդը,  
Նայիր, ովքեր չկան ընկած այնտեղ, միթէ չես ցանկա-  
նում, որ քո խաչդ կանգնի Գողգոթայի խաչերի կողքին:  
Տես, բոլորն էլ քեզ չափ և աւելի գժբաղդ կեանք են  
ունեցել, բոլորին էլ Դեի խայթոցը շանթել է. բայց  
անցել է ժամանակը, փոխուել են մարդկային սերունդները,  
և այժմ զղջմունքի ողբով յաւիտենական յուշարձաններ  
են կանգնեցրել նրանց վերայ: Իմացիր, քեզ համար էլ  
կիանդնի աւելի մեծ և աւելի փառահեղ մի յուշարձան:  
Մեծ է անդունդը. դեռ շատ շատերը պէտք է ընկ-  
նեն այդ անդունդի մէջ, որպէս զի լցւի անդունդը,  
և դերև ելնի Դեի անթիւ. դարձններից մէկը, և  
ապագայի մարդկութիւնը կարողանայ անցնել լցնելու  
միւս անդունդները ես: Մոռացիր ամեն ինչ, ո՛ս գրիչդ,  
որովհետև կարիքը մեծ է... Այսօր դու կեանքի թոյնը  
գատարկեցիր, նիւթդ մեծ է և աշխարհագորգ: Գրիր ու  
այս Սև հրէշի էութիւնը պատկերացրու բոլոր թշուառների  
առաջ քո ամենազօր գրչով: Այդ կեանքով ապրողը  
չի մեռնի:

**Արամայիս.** Ես այլևս չգիտեմ թէ ինչ է կատար-  
ւում, չեմ լսում և չեմ ըմբռնում: Թէև չարժուում եմ,  
սակայն չգիտեմ արդեօք կենդանի եմ: Միայն մի բան



եմ զգում, մի բան նշմարում, որ դէմս կանգնած են երկու էակներ. մէկը՝ կարծես միւսից աւելի գրաւիչ է և ինձ դարձեալ գրաւում է ու իրեն ձգում: Դարձեալ նոյն ճանապարհը... Սակայն մի արտասովոր փոփոխութեամբ... Ես դարձեալ քնդ եմ լսում... Կախը սոսկալի է, և ես ուզում եմ յաղթել:

**Դեւք.** Դարձեալ ապարգիւն... Ի՞նչ է նշանակում այս: Ուրեմն ինձ երբէք չպէտք է յաջողի կտարել սորա յամառ կողմ: Միթէ սա մարդ չէ, միթէ յաւիտենական նոր էակ է ծնւել: Ի՞նչպիսի արարած է սա, որ յանդըզնում է աննկուն կախ մղել ամբողջ աշխարհի տէր և բոլորին սարսափեցնող Դևի դէմ: Արդեօք սա բնութեան սոսկալի աւանձնաշորհում չէ, կամ թէ անժամանակեայ, սխալ վիժում... Դե՛, ունն սարսափից, շեկացիք շարութիւնից, զողն նորահնար դաւերից, և թնձ լինի, ինչ լինելու է, Լսիր. Դևից սոսկալի հրէշ, իմացիր, որ հրէշային կլինի այս բոլորի վախճանը ու յաղթութեան ցնորքներդ կցնգեն վայրկենապէս, և երանի կտաս անցեալին: Ուշքի արի և իմացիր նւմ հետ զօրծունեա: Ես ամենազօր եմ և յաւիտենական, իմ սորուկները անթիւ են, իսկ օգնականներս անչափ: Բոլոր մարդիկ ապրում են ներկայով, բոլոր իմ սորուկները հոգում են իրենց համար, և այդ բնական և յաւիտենական ճշմարտութիւն է՝ օրէնք է. իսկ դու ուզում ես քացատութիւն կազմել, դու ուզում ես ապրել ապագայի ցնորքներով և ուրիշների համար... Այսօր բուրբ իմ բարեկամներն են, իսկ դու իմ թշնամին: Բուրբ իմ գեղեցկութեամբ հրճում են, բոլորը ինձնով են ապրում և վայելում աշխարհիս բոլոր վայելքները, իսկ դու իմ մէջ այլանդակ տղեղութիւն ես իբր թէ նկատում և ուզում ես առանց ինձ ապրել ու վայելք գտնել: Սակայն մի բան մոռանում ես, որ բովանդակ աշխարհը իմ հրամաններով, օրէնքներով է ապրում... Դու ուզում ես նոր օրէնք գտնել: Ո՞րքան թշուառ,

ծիծաղելի խոհեր... Սակայն այս բոլորի վերջը սոսկալի կլինի... Ես յաւիտեան կփշրեմ այն գրիչը, որով դուք ուզում էք իմ անթափանց կաշին ծակել:

**ԱճՑ. ԿԻՆՐ.** Թնձ գտոյ, թնձ տնայ Դևը, մի լսիր նորան, շարունակիր ճանապարհդ, այլ ես նա, եթէ չարութիւնից և զայրոյթից նոյն իսկ խելագարւի, քեզ չի կարող շեղել: Գործիր ուրեմն, դու թէև նորից վերածնեցիր, սակայն չնչին է կեանքդ՝ պարտականութիւններդ բարեխիղճ կատարելու համար:

**Արամայիս.** Ես ահա շարունակում եմ... Վստահութեամբ քայլում եմ ընկնելու յաւիտենական անդունդը:

Վարագոյր:

Գ.

վերջին վայրկեաններ.

**Արամայիս.** Օ՛, անտանելի է մարդկային ճակատագիրը, անտանելի է անձանօթ ուղին... Եւ սրչափ անթիւ են նրա տանջանքն ու վշտերը: Անցան կեանքիս վառվառն ժամանակները, անցան քաղցր օրերս, ահա հասել է կեանքիս վերջը, սակայն միշտ միեւնոյնը, միշտ տանջանք ու հալածանք, քաղց ու ծարաւ: Արդեօք ինչ է թագնւած այս վարագոյրի յետեր:

**Դեւք.** Ի՞նքդ արացի աւիր քո բազմին, ինքդ մերժեցիր ինձ և ծաղրելի կախ սկսեցիր իմ դէմ: Այժմ վերջին վայրկենիդ կանգնած եմ դէմդ, որպէս զի տեսնես իմ սոսկալի պատկերս, յիշէս անցեալները, զգաս քո ոչնչութիւնը և սոսկաս:

**Արամայիս.** Սոսկալի ես, հրէշ... Արդեօք մինչև էրբ պէտք է շարունակես քո զազանութիւնները:

**Դեւք.** Քանի խորչում ես ինձնից, քանի իմ մէջ



տղևը լեթիւն, այլանդակութիւն ևս նշմարում, ևս միշտ քս թնամին կմնամ: Այսօր ամբողջ մարդկութիւնը քեզ վտանգաւոր խելագար է համարում, այսօր նա պատրաստ է քեզ կենդանի թաղելու և միայն սպասում է հրամանի: Ի՞նչ էիր տենչում, ի՞նչ էիր մտածում, չլինի կարծում էիր, որ դրանով յաւիտենական յուշարձան կկանգնեցնէիր: Անմիտ, ինչպէս մոռացար հաժախարհային ամայութիւնը, ինչպէս հեղնեցիր ինձ և իմ սպառնալիքները: Կեանքիդ դարունը նւիրեցիր դրչիդ, անսկոյանք քս մաքի արտայայտութեան, սակայն դու այս բոլորը թողնելու և մանրամասններին տուրբակներ շինելու համար: Այժմ դոնէ պարզ է քեզ համար, որ ինձ ոչ ոք չէ կարող դիմադրել, որ մե՞ծ է ուժս և անսահման իշխանութիւնս: Ի՞մ դէմ խիզախողները բոլորը ընկել են, ընկնում են, և ընկնելու են լոկ իմ հայեացքից: Վայ նրան, ով իմ զայրոյթը կզրգոսի:

Արամայիս. Ես մի բան միայն հասկացայ, ինձ կեանքը մի բան միայն սովորեցրեց, և ահա իմ համոզմունքը՝ բնութիւնը կեանքը դոյացրել է միայն կուր համար:

Պեւը. Եւ ամեն մի կոխ ունի վախճան, յաղթութիւնը մէկինն է... Իմ օրէնքները պահանջում են ստրկութիւն. հնազանդութիւն: Ով ստրուկ չէ, ով ձրգասում է ազատութեան անմիտ տեսութեան, նա իմ թըշնամին է, և ևս կկուեն նրա հետ, մինչև որ ստրկութեան լուծը ուժով կկատուի նրա վզին: Հա, հա, հա, ինչ թշուառ են մարդիկ, որ մտածում, ձգտում են անհասին: Ի՛նքդ հաչիւ տուր քեզ, արդէն հասել է կեանքիդ վերջը, անցել ևս այն ուղին, որը բոլորը ցնդաբանութիւն են համարում, և որքան օգուտ է տւել քեզ. իրականացան յոյսերդ:

Արամայիս. Ես այժմ էլ ոչինչ չեմ հասկանում: Սիրել եմ, տանջւել ու գործել եմ և այժմ էլ սիրում եմ: Ես մեղաւոր չեմ: Կար մի ուժ, մի անդիմադրելի ուժ, որը ինձ քաշում, տանում էր, թէ ուր,

ինքս էլ չզիտեմ:

Պեւը. Բայց միթէ այժմ էլ զղում ևս այդ ուժը և որքան տւեց նա քեզ: Արդեօք հասկացար կեանքի էութիւնը, իմացար թէ ինչն է իսկական երջանկութիւնը, պարզեց քեզ համար կեանքի նպատակը... Կոյր, թշուառ, դու կոյր ես...

Արամայիս. Ո՞վ կարող է ձգտել այնտեղ. միթէ այլանդակ ցնորք չէր լինի, և թէ մարդկանց մէջ ձգտում մտազրադ, տանջող, հոգեմաշ ձգտում լինէր կեանքի նպատակին հասկանալու: Ամբողջ կեանքումս մի գաղտնի ցաւ ունէի, և այժմ դու վէրքի տեղն ևս ցոյց տալիս: Սակայն ուշ է, ևս թշուառ եմ... Թշուառ են մարդիկ, որովհետեւ կոյր ծնւում են, կոյր ապրում և կոյր մեռնում:

Պեւը. Լսիր, հպատակելիք ինձ, և դու կհամոզւես, որ ամեն մի վէրքի բուժողը ևս եմ: Ես խղճում եմ քեզ, և սիրում եմ քո շարածիճի յանդգնութիւնը և ևս քեզ խոտանում եմ թոյլ տալ ճաշակել և ճանաչել իսկական երջանկութիւնը... Ես քեզ կպարզեմ կեանքի նպատակը, ես քեզ կշղթայեմ ոսկէ շղթաներով, արծաթէ փականով կփակեմ այդ շղթաները և անդին քարերով ճակատիդ կդրոջմեմ «ն դ ո վ ք» բառը. իսկ դու առանց զգալու, ուրախ և երջանիկ կկրես այդ բոլորը, ինչպէս կանայք զարդարանքները, աննպատակ հաճոյքով և անմիտ բերկրանքով: Դու կստանաս երիտասարդութիւն, թէև կարճ կլինի այդ: Մի քանի վայրկեան, և դու պիտի մեռնես, սակայն ևս քո կեանքը կերկարացնեմ...

Արամայիս. Միթէ, հաւատամ, որ չկայ ճակատագիր և մարդու կեանքի վերայ իշխողը չի որոշել նրա բաղդն ու մահը: Հաւատամ, որ Դեւը ամենից հզօր է, և գաղտնի ոճիր չի թագնւած այդ վարագոյրի տակ: Միթէ կայ, ևզէլ է և բջանիկ մարդ. միթէ երջանիկ, կատարեալ երջանիկ են քո ստրուկները:

Պեւը. Այո, չի եղել և չկայ երջանիկ մարդ, և իմ ստրուկների երջանկութիւնը կատարեալ չէ, որովհետեւ



ևս այդ ոչ մէկին արժան չեմ համարել և չնորհել, բայց այդ խոստանում եմ քեզ: Սակայն մի բան կայ, որ իմ ստրուկները սարսափում են մահից, որովհետև նրանք ապրում են ներկայի համար, իսկ դու և քեզ պէսները մահւան էք տենչում, որովհետև դուք ապրում էք ապագայի համար, և երեակայում էք թէ ապագայում երջանիկ կապրէք: Լսիր ինձ. փորձիր և այս, որը երբէք չես փորձել, և դու ինչնից անչափ դո՛ւ կմնաս:

**Արամայիս.** Չնայ Գև, ինչո՞ւ վերջին վայրկեաններս անգամ յուզում ես, ինչո՞ւ չես թողնում գոնէ խաղաղ մեռնել:

**Պեւը.** Միթէ սովից մեռնողը կարող է խաղաղ լինել: Միթէ բոլորից հալածւածը, արհամարւածը մահւան ժամին խաղաղութիւն կզգայ:

**Արամայիս.** Անչիօթ միտքը միշտ խաղաղ կմեռնի: Եթէ մարդ սիրել է մի սրև է բան, տանջւել զբանով և մեռնում է անչիօթ, այդ սիրելով, առանց կատակածից տանջւելու, նա միշտ խաղաղ և երջանիկ կլինի: Իսկ քաղցը և շարչարանքը... շարագոյժ հողմեր են, որոնք սակայն անկարող են որձաքար ժայռը խորտակել:

**Պեւը.** Հէնց զբանով է, որ դու սոսկալի ես, հէնց այդ կայ քո մէջ, որ սախում է ինձ քեզ վերայ ուշք դարձնել: Բայց իմացիր, նորից եմ կրկնում, տանջանքը, հալածանքը, շարչարանքը և նոյն իսկ քաղցն ու սովամահութիւնը իմ չնչին կատակներն, են և եթէ իմ այդ կատակները չեն սղղի քեզ վերայ, այն ժամանակ կլինի սոսկալին...

**Արամայիս.** Այլ ես սոսկալի չկայ մարդու համար: Այս բոլորից յետոյ մահը, որքան էլ այլասեր լինի, դարձեալ անկարող է սոսկում պատճառել: Սակայն բացի այդ բոլորը, կոյ իմ մէջ և մի ուրիշ համոզմունք, որի արմատները շատ խորն են: Ես համոզւած եմ, որ մի օր էլ դու պիտի սոսկաս, երբ զգաս, որ քո բոլոր զօրութեան սակ ծածկւած է ոչնչութիւն: Կզայ մի ժամանակ,

երբ քո այլանդակ պատկերը կբացւի մարդկութեան առաջ. բոլորը քեզնից երես կդարձնեն: Ամենուրեք կհնչի զրչի խօսքը, և մենք կապրենք այն ժամանակ յաւիտեանական երջանկութեամբ...

**Պեւը (Քրքչալով)** Եւ դու հաւատում ես դրան, հաւատում ես, որ ապագան քեզ համար յաւիտենական յուշարձան կկանգնեցնէ:

**Արամայիս.** Կան օրինակներ:

**Պեւը.** Սուտ է բոլորը, ցնորք են և զածները... Օ՛, ես սոսկալի եմ, անսահման է իմ դարոյթն ու վրէժխնդրութիւնը: Եւ նորից երգում եմ, որ սոսկալիներից սոսկալին կլինի ապագան:

**Արամայիս.** Երկար տարիների կռիւը երկաթից աւելի ամբարցրեց իմ կամքը... Ուժը անդօր է համոզմունքի առաջ: Իսկ ապրել նրա սիրով, որով ես ապրեցայ, ամենամեծ երջանկութիւնն է. ահա իմ վերջին խօսքը:

**Պեւը.** Ո՞վ է խօսում այս մարմնի մէջ, ո՞վ է տւել այս ուժը սորան, միթէ դարձեալ ապարդիւն պէտք է անցնի փորձս: Եւ միթէ սորա քաղցից և հալածանքից թուլացած մատները նորից պէտք է շարժւեն:

**Աճժ. Կիճը.** (Ներս մտնելով) Մեծ է կարիքը, աշխատաւորները պակաս: Մահւան բոսէին անգամ պէտք է շարժւեն մատները:

**Պեւը.** (Չայրացած) Ուրեմն ես կշտապեցնեմ մահը, ես յաւիտեան կհորացնեմ մատներ շարժող մկանները, և մի երջանիկ օր քո արտաստուր բնածին էութիւնը կյաղթւի, կրնկճւի իմ անսկիզբն և անսահման շարութեան ճիրաններում (Գնում է):

**Աճժ. Կիճը.** Խցիր ականջներդ, մի լսիր նորան, որովհետև նոր անսահման ուժի և իշխանութեան դէմ հզոր է և իմը: Նրա ստրուկները թշւառ են և չեն զգում իրենց խեղձութիւնը, նրանք ինչպէս աշխարհ են եկել, այնպէս էլ կգնան, առանց հետքեր թողնելու: Բայց ինձ սիրողները տանջալից ուղիում թողել են և թողնելու



են անջնջելի հետքեր: Մի խաբւիք հարուստ բարեգործ-  
ների, բռնակալների, սարուկ պաշտօնեաների, և սողա-  
ցող որդերի յուշարձաններով. այդ բոլորը շինծու են,  
այդ բոլորը խախտւած հիմքերի վերայ են դրւած, ժա-  
մանակը կքանդի այդ բոլորը. իսկ ապագան սարսափի  
և այլանդակութեան թանգարանում բեկորներ կպահի:  
Եւ այդ բոլորի փոխարէն անյայտ շիրիմների վերայ  
մինչև երկինք համեզ յուշարձաններ կկանդնի:

**Արամայիս.** Ես ինձ երջանիկ եմ զգում, որովհետև  
մեռնում եմ խաղաղ հոգով և խղճով:

**Աճձ. ԿԻՅՐ.** Այդ է մարդկային կեանքի ամենամեծ  
երջանկութիւնը, և դ՛ու բոլորից երջանիկ է:

**Արամայիս.** Ես երջանիկ եմ... Այն, և այդ իմ  
ականջիս խորդ չի հնչում: Ինձ թւում է, որ ես գտել  
եմ երջանկութեան իսկական աղբիւրը և յազնեցել նրա  
կենսատու ջրով: Սակայն կայ մի գաղտնի վիշտ, կայ  
մի վէրք, որը մինչև այսօր ցանկացել եմ բուժել, բայց  
ի դ՛ուր: Այդ վէրքը խորը արձաններ ունի, նրա ցուրը,  
նրա պատճառած տանջանքը նսեմացնում ու սև չրջա-  
նակով պատում է իմ անծայր երջանկութիւնը: Քանի  
գիտակցում եմ, որ նա գոյութիւն ունի, միշտ զգում  
եմ, որ երջանկութիւնս կատարեալ չէ: Մինչև այսօր  
նոյն իսկ ինձ անյայտ էր այդ վէրքի տեղը, սակայն  
Դեռ մասնացոյց արեց: Այսօր ես մեռնում եմ, սակայն  
չիմանալով ինչո՞ւ ծնւեցի, ինչո՞ւ եմ ծնւում  
մարդիկ, ո՞րն է այն ուղիւն, որով գնում է  
կոյր մարդկութիւնը, ո՞րտեղ է նրա ծայրը՝  
վերջին կայանը: Խնդրում եմ, աղաչում եմ,  
բուժիր այս վէրքս, թող ինքնադիտակցութիւնս, թէև  
ուշ, սակայն կատարեալ լինի: Մինչև այժմ ես քեզ  
հու հնազանդ եմ եղել, լսել և կատարել եմ քո խոր-  
հուրդներն ու պատէրները, սոսկալի մարտում մաշել  
եմ կեանքս, և այժմ էլ դ՛ու պարտաւոր ես լսել և կա-  
տարել իմ միակ խնդիրս: Աղաչում եմ, պարզիր ինձ

այդ պաղտնիքը, ես ցանկանում եմ, որ իմ երջանկու-  
թիւնը կատարեալ լինի: Եւ ո՞վ կարող է լուծել այդ  
բարդ խնդիրը, ո՞ւմ ձեռքին է այդ Մեծ Գաղտ-  
նիքի բանալին, եթէ ոչ, միայն քո ձեռքին:

**Աճձ. ԿԻՅՐ.** Ո՛չ որի թոյլ չի տւած այդ լուծել  
մարդկանց համար: Դեռ մարդկային թշուառ ուղեղները  
երկար կմտորեն այդ գաղտնիքը գտնելու, սակայն իզո՞ւր:  
Անծայր է այն ուղիւն, փշալից, ապառաժներով և անտակ  
անդունդներով լի, շատերն են անցել այդ ուղիով և  
քնկել հէնց առաջին քայլում, և դեռ անթիւ, անհամար  
կլինկն ընկնողները: Դ՛ու էլ այդ անքանակ թւի մի  
չնչին միութիւնն ես և պիտի ընկնես, որովհետև առա-  
ջին քայլը փոխել ես, ասան այն, ինչ որ քո ուղեղն է  
թեյազրում. ասան այն, ինչ հասկացրել է քեզ կեանքը  
և ընկիր: Իսկ ես, երբէք չեմ լուծիլ այդ խնդիրը: Կըրկ-  
նում եմ, երբէք:

**Արամայիս.** Երբէք: Ուրեմն դու մերժում ես իմ  
միակ խնդիրը: Ուրեմն մինչև այսօր դու կեղծիքներով  
ես սնել ինձ, ուրեմն խաբւութիւն է քո էութիւնը: Օ՛,  
Դեռ հրէշ է, իսկ դ՛ու, նրանից վատթար: Նրա կոխը  
պարզ է, իսկ քննը խաւար, քողարկւած և զգւելի: Եւ  
եթէ հաստատ է այժմ քո որոշումը, եթէ երբէք դու ինձ  
չես յայտնի այդ սոսկալի գաղտնիքը, ես հենց այս  
վայրկենիս աշխարհագորդ ձայնով կնզովեմ քեզ,  
կնզովեմ ինձ և բոլորին՝ ովքեր քեզ լսում են: Ես  
կնզովեմ ամբողջ անցելը և խաւար ապագան: Մի սոս-  
կալի կոչ կարծակեմ և քո կուրացրած ամբոխին կհրա-  
ւիրեմ քեզ նզովելու: Եւ բոլորը կլսեն իմ կոչը, Դեռ  
կաջակցի ինձ, և արձագանքը կհնչի ամենուրէք: Ասան,  
պարզիր այդ և մի ստիպիր գիմել այդ միջոցին:  
Ասան, նոյն իսկ խաբւր միցնորքով, միայն թէ ես համոզ-  
ւեմ: Խնդրում եմ, աղաչում եմ:

**Աճձ. ԿԻՅՐ.** Դու ստիպում ես, դու պահանջում  
ես, որ ես անպատճառ ասեմ այդ գաղտնիքը. սակայն



դու ինքդ էլ չես հասկանում պահանջը: Կասեմ, բայց քո մոզէսային անկւածդ, խուլ ականջներով, անկարող է լսել ինձ և հասկանալ: Իմացիր, որ այսօր ես մի տիեզերազորդ գործ պիտի կատարեմ, Դեր կստակայ իր մօտալուտ կրօնատը զգալով: Իսկ տիեզերական քաօսը անպատմելի կլինի: Ասում եմ, լսիր և չզղջնաս...

**Արամայիս.** Ուրեմն դու ասում ես, դու չես մերժում ինձ... Օ՛, երանի թէ ամբողջ աշխարհի ականջները ինձ առջին մի քանի վայրկեան, երանի աստուածային գիտակցութիւնը իշխէր ինձ, որ ես կարող լինէի քեզ լսել և հասկանալ: Ասա, խսիր:

**Աճձ. ԿԻՅՐ.** Ուրեմն լսիր, սակայն իմացիր, վերջին խօսքս կլինի քո մահը: Դու հարցնում ես, ինչու եմ ծընւում մարդիկ, ինչ է մարդկային կեանքի նպատակը: Այդ բարդ խնդիրը երկու գործողութեամբ է լուծուում: Առաջինը՝ ուր է տանում կեանքի ուղին, երկրորդը՝ ինչու է կայ մի անծայր, անվերջ Ուղի, մի դաժան վերելք. և մարդկութիւնը սշխարի պէս կանգնած է գեռ այդ վերելքի ստորոտում: Բոլորը ուժեքը միացրած աշխատում են առաջ շարժել, սակայն մտքից արագ անցնում են դարերը, իսկ մարդիկ հազիւ մազաչափ առաջ են շարժուում: Կեանքը մեզ շատ օրինակներ է տւել, պէտք է մտածել և դատել: Ի՞նչ նպատակ ունեն բոլոր մարդկանց ապշեցնող գիւտերը. ինչու եմ մարդիկ ճշդնում իմանալ անցեալի չզգրիտ պատմութիւնը և մութ ապագան: Ինչու փորձում են երկրի կուրծքը, հինաւուրց աւերակները, բարձրանում են լուծների զաղաթները և անում մարդարէութիւններ ու գուշակութիւններ: Ինչու եմ մարդիկ ձգտում ուսումնասիրել, լուծանալ տիեզերքը իւր անթիւ և անհամար էակներով: Ինչու եմ հնարում օդաչու նաւերը և ուր են ուղում թռչել, քանի որ բնութիւնը նրանց զրկել է թևերից: Ինչու եմ սուզուում ովկիանոսների խորքերը, քանի որ այդ քիմուտաւորներին է վերապահւած: Ինձ եմ մարդիկ աշխա-

տում, որ կարող լինեն կեանքը երկարել և յաւիտեանական դարձնել... Եւ եթէ այժմ շարունակեմ այսպէս, կանցնեն դարեր և չեն վերջանալ հարցերը: Բայց այդ բոլոր հարցերի պատասխանը մի է՝ ձգտում դէպի անհուշը, որպէս զի ամենագէտ և ամենակարող լինեն և Մեծ Գաղտնիքի երկրորդ մասի բացատրութիւնը գտնեն: Եւ այդ բոլոր կատարում է, սակայն առանց գիտակցութեան և հասկացողութեան: Իւրաքանչիւրը առաձին նպատակ ունի, սակայն բոլորինը մէկ է՝ բարձրանալ այդ անծայր, ապառաժոտ և անդնդալի վերելքը ու հասնել վերջին կայանին: Մարդիկ այնքան շարժարեւ են, որ եթէ լեռները քանդէին, այժմ երկրադունդը զրկւած կլինէր նոյն իսկ չնչին խորտուբորաից. իսկ վերելքում մազաչափ հազիւ են առաջ գնացել: Լսիր, շարունակում եմ, արիացիր, եթէ կարող ես, որովհետեւ շատ երկար պիտի շարունակեմ:

**Արամայիս.** Բաւական է, ես այլ ես չեմ լուծ: Լսիր, ինչայն ինձ: Թող դոնէ այնքան ուժ ունենամ, որ գրեմ վերջին կտակս: Խնդրում եմ, ազաչում եմ, ներքի իմ յանդգնութիւնը, ես զղջում եմ, ես յանցաւոր եմ քո առաջ:

**Աճձ. ԿԻՅՐ.** Ես այլ կերպ չէի սպասում: Գրիր, շապիր, որովհետեւ ես մի քանի վայրկեան... և դու անկարող կլինես: Բայց ինչ է քո վերջին կտակը:

**Արամայիս.** Ա՛յն, ինչ որ հասկացայ քո վերջին խօսքերից: Այդ էլ մեծ գանձ է, որ ես կթողնեմ մարդկութեան որպէս ժառանգութիւն... (Գրում է. միջոց):

**Աճձ. ԿԻՅՐ.** Ամեն բան վերջացաւ... Դեռ խորն է Դեի փորած անդունդը և շատերը պիտի ընկնեն այնտեղ... (Գրսից լուում է ամբոխային աղմուկ, ապակիները ջարդուում են եւ քարեր են ներս թռչում: Աղմուկը սաստկանում է եւ լուում են ռանածայներ, ներս է մտնում Գեւը, յետևից մեծ ամբոխ, ամեն դասակարգի մարդկանցից):

**Դեւը.** (Յոյց տալով Արամայիսին) Ահա հրէշը, բռնէք,



խեղճէք, սպանէք... Դա է ձեր միակ թշնամին (Անուիլի աղմուկ, ամբոխը խեղղում է Արամայիսին): Ա՛յ, այգպէս, սեղմէք կոկորդը, կեցցէք իմ ստրուկներ... հրաշալի է: Թող յաւիտեան ջնջւի դորա անունը:

**Ա.ԳՃ. ԿԻՃԸ.** Սոսկալի չարութեան աղբիւր, այսօր սխալւեցիր: Նա կենդանի կմնայ յաւիտեան և նորան կփառարանեն ամեն տեղ:

**Դեւը.** Թող ապագան վճռէ, թէ մեզնից որինն է յաղթութիւնը... Է՛յ ստրուկներ, գրւածքները այրէք, վերջին կտակը պատռէք...

**Ա.ԳՃ. ԿԻՃԸ.** (Վերցնելով բոլոր գրւածքները). Դու կուրացրել և արբեցրել ես սրանց և ստիպում ես, որ շռայլեն իրենց կտակւած ամենաթանգագին դանձերը: Սակայն ես կենդանի եմ, ես եմ խնամատարը այդ անշահախ մարդկութեան անգին դանձերը, և երբէք թող չեմ տայ... (Գնում է):

Վարազոյր

## Ապագայի վեհուր.

(ՊԱՏԿԵՐ)

Սաղարթախիա ծառերի սուերում կանգնած է Գրչի Մարդու փառահեղ յուշարձանը, զարդարւած բազմաթիւ պսակներով: Արձանը չըջատատել է նոյն անբոխը, որը խեղճեց նրան: Բոլորը ծունկ կն խոնարհած և բռնած ունեն գեղեցիկ պսակներ, հետևեալ մակագրութիւններով՝ «Մ ե ծ մ ա ր դ ու ն», «Յ աւիտեան ապրող է ա կ ի ն», «Մ ե ծ մ ա ր տ ի կ ի ն» և նման խօսքեր: Դեը մտայլւած, գլխիկոր կանգնած է մի անկիւնում. իսկ Անծ. Կինը ուրախութիւնից փայլող դէմքով գրկել է յուշարձանը: Բեմի առջևի մասում կանգնած է Գրչի Մարդու ուրւականը, փաթաթւած սպիտակ սաւանով և միայն դէմքն է երեւում, որ ժպտում է անհուն բերկրանքով: Հեռից լսում է երաժշտութիւն և մի խմբական զարթ երգ: Միջոց, դադարում է երաժշտութիւնը:

**Արամայիս.** Այժմ ես ապրում եմ յաւիտեան ա կ ա ն կ ե ա ն ք ո վ:

**Դեւը.** Ո՛չ, դա սուտ է, դա պատերազմի երերուն վիճակն է և մէկ վայրկենական ուրախութիւն... Դեռ չատ հեռու է այս կուր վախճանը:

**Ա.ԳՃ. ԿԻՃԸ.** Այժմ հերթը իմն է հրճելու...

(Նորից սկսում է երաժշտութիւնը):

Վարազոյր





**ԳՈՐԾՈՂ Ս.ՆՁԻՆՔ.**

Արամայիս—Գրչի Մարդր.

*Արամայիս*

Մանիա—նրա կինը.

*Մանիա*

Մի երիտասարդ.

*Մի երիտասարդ*

Անձանօր կին.

*Անձանօր կին*

Դե.

*Դե.*

Ամբոխ.

Յաւերժահարսներ:





124

LS 46700

2013

<< Ազգային գրադարան



NL0014451

5



